

## Վարկ վերցնելիս Ղուք պետք է տեղեկացված լինեք ...

Հարգելի՛ գործընկերներ,

Մենք Ձեզ տեղեկացնում ենք .

### Տոկոսադրույքների հաշվարկման կարգը.

**Ուշադրություն՝**ն. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ : ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ: Օրինակ

Վարկի մնացորդ՝ 1.000.000 ՀՀ դրամ  
Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 15 %  
Օրական տոկոսագումարի հաշվարկ՝  $1.000.000 * 15\% / 365 = 410.96$

### Տոկոսադրույքի փոփոխման կարգը.

Վարկային կազմակերպությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել տրամադրված վարկի տոկոսադրույքը, եթե առկա են ներքիիշյալ հանգամանքների որևէ մեկը, մասնավորապես, եթե՝ տոկոսադրույքի վերանայման (այսուհետ՝ Վերահաշվարկի օր) և վարկավորման պայմանագրի կնքման օրվա դրությամբ տեղի է ունեցել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 ԱՄՆ դոլար-դրամ փոխարժեքի 5 (հինգ) տոկոս և ավել փոփոխություն (դրամի արժեզրկում):

տեղի են ունեցել ֆինանսական շուկայից Վարկային կազմակերպության ներգրավված և/կամ շուկայում տեղաբաշխած միջոցների տոկոսադրույքների տատանումներ, և/կամ

ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել վարկատեսակների տարեկան տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները, և/կամ

պարզվի, որ Վարկառուի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են, և/կամ

Վարկառուն Վարկն օգտագործել է պայմանագրով նախատեսված նպատակին ոչ համապատասխան, և/կամ

Վարկառուն չի ներկայացնում վարկավորման պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը /փաստաթղթերը, հաշվետվությունները/ կամ թույլ է տալիս դրանց ներկայացման ժամկետների կետանց, և/կամ

Վարկառուն չի կատարում գրավադրված գույքի ապահովագրությունը՝ Վարկային կազմակերպության կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում, և/կամ

առկա են ՀՀ օրենսդրությամբ դրա համար նախատեսված այլ հիմքեր:

Վարկային կազմակերպությունը տոկոսի չափի փոփոխման մասին առնվազն 30 /երեսուն/ օր առաջ ծանուցում է Վարկառուին, ինչպիսի հանգամանքը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված տոկոսը կիրառելու համար: Եթե Վարկառուն համաձայն չէ փոփոխված տոկոսի հետ, ապա նա իրավունք ունի վաղաժամկետ լուծել համապատասխան վարկավորման պայմանագիրը՝ կատարելով Վարկային կազմակերպության հանդեպ տվյալ պայմանագրով իր ունեցած պարտավորություններն ամբողջ ծավալով:

### **Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝**

- Վարկային կազմակերպության և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Գործարար համբավը
- և այլն

### **Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական եզրակացության հիմքերն են.**

- դիմելու պահին հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության արդյունքների անհամապատասխանությունը ներքին իրավական ակտերի չափանիշներին,
- ներկայացված ծրագրի անբավարար շահութաբերությունը և բարձր ռիսկայնությունը,
- վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորումը,
- ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,
- վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը,
- հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը,
- հաճախորդի բացասական վարկային պատմությունը,
- այլ պատճառներ:

### **Գրավի բռնագանձում.**

**Ուշադրություն՝ն.** ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ԳՐԱՎԻ ԱՐԺԵՔԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՐՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

### **Վարկային ռեզիստրին տրամադրվող տեղեկատվություն**

**Ուշադրություն՝ն.** ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ԶԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԼԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՄ:

**ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՍՄԻՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՇԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ
- Քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ (ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց համար՝ անձը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ տարածքում մշտական հաշվառման վայր ունենալու վերաբերյալ համապատասխան նշումով(տվյալ դեպքում անհրաժեշտ է ՀՀ քաղաքացի հանդիսացող անձի երաշխավորությունը)
- Սոցիալական ապահովության քարտ (առկայության դեպքում)
- Ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
- Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև)
- Տեղեկանք աշխատանքի վայրից, աշխատավարձի վերաբերյալ կամ եկամուտները հավաստող փաստաթուղթ
- Աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (բացառությամբ՝ պետական ծառայողների)
- Եթե Վարկառուն ամուսնացած է տեղեկանք ամուսնու/կնոջ/ եկամուտների վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում)
- Երկրորդային եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն և ապացույցներ (առկայության դեպքում)
- Հաճախորդի և Ավտոսրահի միջև կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր (բնօրինակը)
- Հաշվետվություն՝ տրանսպորտային միջոցի գնահատման վերաբերյալ
- Ձեռքբերվող տրանսպորտային միջոցի հաշվառման/գրանցման վկայագիր և սեփականության վկայական (բնօրինակները)
- Տեղեկանք Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ (բնօրինակը)
- Տրանսպորտային միջոցի ապահովագրության (ԿԱՍԿՈ) պայմանագիր (բնօրինակը)
- Երաշխավորի համար պահանջվում է՝
  - ✓ անձնագիր և սոցիալական ապահովության քարտ
  - ✓ ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
  - ✓ տեղեկանք աշխատանքի վայրից, աշխատավարձի վերաբերյալ կամ եկամուտները հավաստող փաստաթուղթ
  - ✓ աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (բացառությամբ՝ պետական ծառայողների)

Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր՝ Վարկային մասնագետի պահանջով:

## Լրացուցիչ տեղեկատվություն

### Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝

- Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր:
- Հաճախորդը չի բավարարում Վարկային կազմակերպության նվազագույն պայմաններին:
- ՀՀ ԿԲ Վարկային ռեզիստր և /կամ «ԱԲՌ-Ա» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն:
- Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ:
- Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը:
- Եթե գրավի առարկան՝
  - ✓ շրջանառությունից հանված գույք է
  - ✓ անբաժանելի գույքի առանձին մաս
  - ✓ վթարային շենք, շինություն
  - ✓ այլ պայմանագրով արդեն գրավադրված համայնքային գույք
  - ✓ գրավի առարկայի լիկվիդայնությունը չի բավարարում վարկի տրամադրման համար

### Տոկոսագումարների հաշվարկման կարգը՝

Ամսական հավասարաչափ (անուիտետային) մարումների դեպքում վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն.

$$R = P \times r / (1 - 1 / (1 + r)^n)$$

որտեղ՝

R՝ վարկի ամսական վճարումն է,

P՝ վարկի գումարն է,

n՝ վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկային վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):

r՝ վարկի ամսական տոկոսադրույքը, որը հավասար է վարկի տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Ամսական ոչ հավասարաչափ մարումների դեպքում վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն.

$$Pt = R \times ((1 - 1 / (1 + r)^n) / r)$$

որտեղ՝

Pt՝ վարկի փաստացի մնացորդն է t ժամանակահատվածի վերջում,

R՝ վարկի ամսական վճարումն է,

t՝ վճարումների քանակն է, որոնք պետք է կատարվեն մինչև վարկի օգտագործման ժամկետի ավարտը (ամիսների քանակը),

r՝ վարկի ամսական տոկոսադրույքն է, որը հավասար է վարկի տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին